ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան

19/05/2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

Համայնքի ավագանու նիստին մասնակցում էին՝
Արմինե Հարությունյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Նարեկ Հովսեփյանը, Դավիթ Մարգարյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի լիազորությունները կատարող՝ Աննա Կարապետյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:
Նիստը ուղիղ հեռարձակվում էր:
Մինչ օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Արմեն Հակոբջանյանն առաջարկեց 1 րոպե լռությամբ հարգել Սիսիան համայնքի բնակիչ, զոհված զինծառայող Էդգար Վահանի Սուլեյմանյանի հիշատակը:

Նախքան նիստի օրակարգի հաստատելը համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանը առաջարկեց օրակարգում ավելացնել ևս երկու նախագիծ:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2023 թվականի մայիսի 19-ի հերթական նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

Ավագ Ասատրյանն առաջարկեց բյուջեի հարցը հանել օրակարգից, 2 շաբաթ ժամանակ տրամադրել և քննարկել, հետո դնել ավագանու հաստատմանը:

Աննա Կարապետյան – Ձեր առաջարկությունների հիման վրա փոփոխություններ կանենք բյուջեում և լրացումներ կկատարենք: Քանի որ ամբողջ համայնքի գույքը կալանքի տակ է, տույժերի և տուգանքների խնդիր կա, հետաձգելը համարում ենք ոչ ճիշտ:

Աննա Ավետիսյան – Ի՞նչն է պատճառը, որ վերջին պահին են հարցերը ավելանում:

Արմեն Հակոբջանյան – Հաստատված հաստիքացուցակը մայիսի 17-ին է եկել, իսկ նախագծերը մեկ շաբաթ առաջ բաժանված է եղել, դրա համար նոր ենք օրակարգ ներառում:

Հայկ Հակոբյան – Բյուջեի հարցը կանոնակարգում է պահանջում, նախնական գործողությունները չենք կատարում, այդպես ճիշտ չէ: Եռամսյա ծրագրի հետ կապված և միջնաժամկետ ծրագրի հետ կապված խնդիր կա, որը հիմք է հանդիսանում բյուջեի կազմմանը:

Աննա Կարապետյան – Ձևավորված հանձնաժողովը տվել է իր դրական եզրակացությունը: 5-ամյա զարգացման ծրագիրը, նոր ձևավորված համայնքում, համայնքի ղեկավարը լիազորությունները ստանձնելուց հետո 5 ամսվա ընթացքում է ներկայացնում հնգամյա զարգացման ծրագիրը:

Արմեն Հակոբջանյան – Բոլորին տրվել է հնարավորություն, բոլորը պարտավոր են մասնակցեն քննարկումներին:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-18 Դեմ-3 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում տեղական տուրքերի գոտիավորումները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2023 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 4-ի
5. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2023 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի:
6. Որոշման հավելված 1-ի և հավելված 3-ի 1.1) ենթակետն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հուլիսի 1-ից:
7. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի լիազորությունները կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Դավիթ Այվազյան - Սիսիան համայնքում տեղական տուրքերի և տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին նախագիծը հաստատելուց հետո, հավելված 1-ի և 3-ի 1.1 ենթակետն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հուլիսի 1-ից՝ հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 568-Ն օրենքի փոփոխությունը: Մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը կգործեն Սիսիան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 67-Ն որոշման կարգավորումները, որոնք գործել են 2023 թվականի համար ևս՝ պայմանավորված համայնքի նախկին ավագանու անդամների լիազորությունների դադարեցմամբ և 2023 թվականի համար օրենքով սահմանված կարգով, նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհնարինությամբ:

Հայկ Հակոբյան – 5-րդ հավելվածի 11-րդ կետը վերաբերվում է բնակիչների սպասարկման վճարի և միասնական ամբողջական սպասարկման ոչ բնակելի ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քմ-ի համար 6 դրամ: Դրա մեջ ընդգրկվում է նաև նկուղները, մուտքի դռները և աստիճանավանդակները: 2-րդ հարցը՝ ընտանի կենդանիներ և տնային կենդանիներ հասկացողությանը: Մենք հաստատում ենք տնային կենդանիների համար:

Դավիթ Այվազյան – Բոլոր կետերը վերցված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքից և մենք իրավասու չենք փոփոխություններ կատարենք:

Հայկ Հակոբյան – Եթե մենք քաղաքում պահում ենք տնային կենդանիներ, դրա համար մենք վճար վերցնում ենք և շներ, կատուներ ներառված չե՞ն դրա մեջ: Մյուս հարցը՝ վճարովի գերեզմանների հետ կապված խնդիր ունենք: Եթե մենք սահմանում ենք վճար 3-5հա համար 2.5 միլիոն դրամ, օրինակ՝ ես դիմել եմ այդ ծառայությունը մատուցելու համար, հատակագծով հնարավորություն ունենք տարածք հատկացնելու:

Դավիթ Այվազյան – Մենք ներկայացնում ենք օրենքով կետերը տարածքի մասով և քանակների մասով, հետագայում եթե առաջանա խնդիր, դրան լուծում կտրվի:

Սուրեն Վարդանյան – Դաչաների տարածքը կարա դառնա գերեզմանտուն, քանի որ այդ տարածքը չի օգտագործվում:

Արմեն Հակոբջանյան – Բնապահպանության նախարարությունը պետք է իր թույլտվությունը տա, որ խնդիրներ չառաջանա: Նախագծում ունենք, հարմար տեղ գտնենք, քննարկենք:

Դավիթ Դավթյան – Բնակիչները 6 դրամ վճարում են սպասարկման համար, դրա դիմաց ի՞նչ ակնկալիք ունեն և ի՞նչ ծառայություն է մատուցվում:

«Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Մարգարյան – Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ ենք վերանորոգում, մուտքի դռներ ենք տեղադրում, 4 հատ Շաղատ բնակավայրում, 12 բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքի դռներ ենք փոխել, կոյուղու գծեր ենք վերանորոգել:

Աննա Ավետիսյան – Որևէ տեղ ֆիքսված է այդ գումարները:

Դավիթ Այվազյան – Գումարները, որ բնակիչները վճարումները կատարում են, մուտք է լինում բյուջե, տարվա ընթացքում պայմանագրով սուբսիդիա ենք հատկացնում կոմունալին տարբեր ծառայություններով և կոմունալը սուբսիդիայի արդյունքով կատարում է համապատասխան աշխատանքները:

Ջիվան Մարգարյան – Ինչո՞ւ չենք համատիրություններ ստեղծում:

Արմեն Հակոբջանյան – Ընթացքի մեջ է և պահանջ է նաև:

Հարցը դրվեց քվերակության:

Կողմ-14 Դեմ-7 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի.
   1) եկամուտների գծով՝ 1818900500 հազար դրամ,
   2) ծախսերի գծով՝ 2367181100 հազար դրամ,
   3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 548280600 հազար դրամ, ֆինանսավորման աղբյուրը տարեսկզբի ազատ մնացորդ:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի մնացորդի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի մնացորդի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանել՝
   1) համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ.
   2) համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Դավիթ Այվազյան – 2023 թվականի բյուջեն կազմվել է հիք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների չափը, համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից ներկայացված և ստուգված նախահաշիվները, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների կողմից ներկայացված հայտերը, անշարժ գույքի հարկի, տեղական տուրքերի և վճարների բազային ցուցանիշները: Բյուջեի եկամուտները և ծախսերը պլանավորվում են համապատասխանաբար 1818900500 ՀՀ դրամ և 2367181100 ՀՀ դրամ: Դեֆիցիտը (պակասուրդը)՝ 548280600 ՀՀ դրամ, ֆինանսավորման աղբյուրը հանդիսանում է տարեսկզբի ազատ մնացորդը:
Աշոտ Աղաջանյան – Գորայքի մասով պետական սուբվենցիայի մասին է վճարումները, թե համայնքի մասնաբաժնով:
Դավիթ Այվազյան – Պաշտոնական դրամաշնորհները 1209814500 ՀՀ դրամ, որից 1153486600 ՀՀ դրամ դոտացիան է, 56327900 դրամը ուղղված է պետության կողմից, որի մի մասը մեր բյուջեում է, մնացած մասը՝ մարզպետարանի, բայց արդեն կա պայմանագիրը, ինչը համարվում է արդեն մեր գումարը: Ծղուկ վարչական շենքի և նախակրթարանը մոտավոր 20 մլն.:
Ջիվան Մարգարյան – Անցած տարվա կատարողականը բյուջեով նախատեսվել է եկամուտներ 2մլդ. 139 մլն. դրամ: Այս տարի այդքան քիչ է, չունենք սուբվենցիոն ծրագրեր:
Դավիթ Այվազյան - 2մլդ. 139 մլն. դրամի մեջ ներառում է տարվա ընթացքում պետության կողմից սուբվենցիոն ծրագրերը, մոտավորապես 500 մլն. հատկացվել է սուբվենցիոն ծրագրերի պետական մասնաբաժինը վճարելու համար, աշխատանքները լրիվ չի կատարվել և տեղափոխվել է: Տարվա ընթացքում սուբվենցիոն ծրագրերը սկսելիս, պետությունից պահանջելու ենք այդ գումարները և տարվա վերջում ունենալու ենք մեծ գումար:

Սուբվենցիոն ծրագիրը կազմակերպվում է առաջինը պայմանագիրը կնքվում է շինարարը ներկայացնում է կատարողականը (կամ ավարտական կամ ընթացիկ), մենք ներկայացնում են մարզպետարան, մարզպետարանը ներկայացնում է կառավորություն, հետո մեզ հատկացվում է այդ գումարները, որոնք մուտք է լինում մեր բյուջե և ավելացած գումարը երևալու է:
Ջիվան Մարգարյան – Անցյալ տարվա կատարողականը այս տարվա հետ համեմատելիս, հոդվածներ կա, որոնք չեք կատարել: Հողի հարկի նկատմամբ հավաքագրված գումարը քիչ է դրված:
Դավիթ Այվազյան – Ներկայացվել է մեր բաժինների կողմից ներկայացված թվերին համապատասխան: Դիմեք բաժիններին բացվածքով կներկայացնեն Ձեզ:
Դավիթ Դավթյան – Բյուջեով նախատեսվա՞ծ է համայնքների համաչափ զարգացումը: Վերջին երեք տարվա ընթացքում ի՞նչ է նախատեսված որպես խոշորացված համայնք: Օրինակ Բռնակոթ բնակավայրի հետ կապված:
Դավիթ Այվազյան – Գումարները ընդհանուր է նախատեսված, որի մեջ ներառված է նաև բնակավայրերը:
Աննա Կարապետյան – Խոշորացման նպատակը բնակավայրերի համաչափ զարգացումն է: Հնգամյա զարգացման ծրագիրը ներկայացնելիս ավելի մանրամասն կքննարկենք և ըստ առաջնահերթության կներառվեն բարձրացված խնդիրները:
Արմեն Հակոբջանյան – Այս պահի դրությամբ կատարվում է 2.7կմ Բռնակոթ բնակավայրի ոռոգման ջրագծի աշխատանքները, նախատեսված է կառուցել ֆուտբոլի դաշտ, նոր դպրոց, մանկապարտեզ:
Ավագանու անդամ Հայկ Հակոբյանի կողմից բարձրացված բոլոր հարցերին տրվեց սպառիչ պատասխան:
Հարցը դրվեց քվեարկության

Կողմ-13 Դեմ-5 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ն/

Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու անդամներ Ավագ Ասատրյանը, Հայկ Հակոբյանը, Աննա Ավետիսյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով,

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի հունիսի 23-ին, ժամը 16:00-ին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22-Ա/

Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու անդամներ Ավագ Ասատրյանը, Հայկ Հակոբյանը, Աննա Ավետիսյանը, Ջիվան Մարգարյանը, Մարինե Գրիգորյանը, Գևորգ Դավթյանը, Դավիթ Դավթյանը, Անի Հարությունյանը և լքեցին դահլիճը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու անդամ՝ Կարեն Գրիշայի Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի առաջին տեղակալին վերապահել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և համայնքապետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Գարիկ Հակոբի Հակոբյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալին վերապահել քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված համայնքի աշխարհազորային պայմանական բրիգադի ղեկավարի (հրամանատարի), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և համայնքապետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ:
3. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՎԱԳ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Աննա Կարապետյանը _____